ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1371 16.09.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

3942
18 09 13

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբեր ամսին այցելություն է կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Սիսյանի ՁՊՎ, որի ընթացքում արձանագրվել է.

Թերություն.

Դիտորդական խմբի 03.05.2013թ-ի թիվ 2245/1322 գրությանը ի պատասխան՝ 05.06.2013թ-ին թիվ 2/2-1-1660 գրությունով ոստիկանության կողմից եղել էր պարզաբանում ըստ երկրորդ պարբերության, մեջբերում ենք *«ՁՊՎ-ի խցերի պատուհանները չբացվելու ուղղությամբ միջոցառումներ են ձեռնարկվում»*, որից անցել է 4.5 ամիս և ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել ՁՊՎ-ի խցերի պատուհանների բացման ուղղությամբ:

Խախտում.

Ալեքսանդր Ալեքսանդրի Մանուկյանը ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Սիսյանի ոստիկանության բաժին բերման է ենթարկվել 02.08.2013թ-ին ժամը 15^{40}-ին, իսկ ժամը 16^{00}-ին տեղափոխվել է ՁՊՎ առանց ձերբակալման և անհրաժեշտ փաստաթղթերի: Միայն հիմք է հանդիսացել դատավորի հետախուզում հայտարարելու որոշումը:

«Ձերբակալված անձանց հաշվառման» գրանցամատյանում Ա. Մանուկյանը ՁՊՎ է ընդունվել ժամը 15^{40}-ին, բայց «Ոստիկանության բաժին բերման ենթարկելու» գրանցամատյանում ՁՊՎ է ընդունվել ժամը 16^{00}-ին: Եթե հաշվի առնենք, որ ՁՊՎ-ի «Ձերբակալված անձանց հաշվառման» գրանցամատյանում նշված է արգելանքի վերցնելու

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ժամը, ապա կնկատենք, որ դա այդպես չէ. 15[40] ֆիքսված ժամը դա Սիսյանի ոստիկանության բաժին բերման ենթարկելու և հենց բաժնում կազմված արձանագրության ժամն է:

Ավելացնենք, նաև, որ Ա. Մանուկյանը բերման է ենթարկվել Լոռու մարզի Ստեփանավան քաղաքից և ըստ պատասխանատու ոստիկանների հայտարարության՝ նրա տեղափոխումը Սիսյանի ոստիկանության բաժին տևել է մոտ 6 ժամ:

Արդյունքում՝ Ա. Մանուկյանը 6 ժամ գտնվել է անազատության մեջ, առանց որևէ հիմնավորման, փաստաթղթերի կազմման, և միաժամանակ անհասկանալի է տվյալ ձևով գրանցամատյաններում տարօրինակ գրառումներ կատարելու նպատակը: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ-1,2,/*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություններ թերությունների և խախտումների վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք Դիտորդական խմբի հրատապ հաշվետվություններին տալ առանձին մեկնաբանություններ՝ չընդհանրացնելով մարզի մնացած ՀՊՎ-ներում առկա հիմնախնդիրների հետ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-_____ «_____»_____ 2013թ.

Ձեր՝ 16.09.2013թ. թիվ 2621/1371 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ
Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցի ընթացքում արձանագրված թերությունները և խախտումները քննարկվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Սյունիքի մարզային վարչությունում:

Սյունիքի մարզային վարչությունում անցկացվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով պարզվել է.

1. ՁՊՎ-ի խցերի պատուհանները դեռևս շինությունը շահագործման հանձնելու պահից գտնվել են փակ վիճակում և նախագծով դրանց բացվելը նախատեսված չի եղել: ՁՊՎ-ի պատուհանները ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալված անձանց պահելու վայրերի ներքին կանոնակարգի 117-րդ կետի պահանջներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է իրականացնել շինարարական մեծածավալ աշխատանքներ, որի համար պահանջվում են ֆինանսական միջոցներ և որոշակի ժամանակահատված: Այսուհանդերձ, այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և նշված ոլորտի պատասխանատու անձանց հանձնարարվել է միջոցներ ձեռնարկել կարճ ժամանակահատվածում ոստիկանության Սիսիանի բաժնի ՁՊՎ-ի խցերի պատուհանները վերը նշված իրավական ակտով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

2. Ամբաստանյալ Ա.Մանուկյանը խուսափել է ներկայանալ դատական նիստերին, որի հետևանքով դրանք մի քանի անգամ հետաձգվել են: Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 151-րդ, 310-րդ և 313-րդ հոդվածներով, 17.06.2013թ-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել Ա.Մանուկյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու

մասին խափանման միջոցը փոխարինել **կալանավորմամբ** և վերջինիս հայտնաբերելու նպատակով նույն որոշմամբ նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Հիշյալ որոշման հիման վրա 02.08.2013թ. ամբաստանյալ Ա.Մանուկյանը Ստեփանավան քաղաքից տեղափոխվել է Սիսիանի բաժնի ՁՊՎ, իսկ 05.08.2013թ. վերջինս ներկայացվել է դատարան, որտեղից էլ տեղափոխվել ՀՀ ԱՆ <<Գորիս>> ՔԿՀ:

Ինչ վերաբերվում է Ա.Մանուկյանին առանց որևէ հիմնավորման 6 ժամ անազատության մեջ պահելուն, ապա Ա.Մանուկյանին արգելանքի վերցնելու հիմք է հանդիսացել դատարանի որոշումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, կալանքի տակ պահելու ժամկետը հաշվվում է դատարանի որոշումը կատարելու պահից, իսկ նույն օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքը սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին:

Տվյալ դեպքում, ոստիկանության ծառայողների գործողություններն իրավաչափ են և նրանք գործել են օրենքի սահմաններում:

3. <<Ձերբակալված անձանց հաշվառման գրանցամատյան>>-ի 7-րդ սյունակում հերթապահ մասի պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող հերթապահ մասի ավագ տեսուչ-հերթապահ Վ.Գևորգյանը մեխանիկորեն ՁՊՎ տեղափոխելու ժամի՝ ժ.16.00-ի փոխարեն նշել է կալանավոր Ա.Մանուկյանին բաժին բերելու ժամը՝ ժ.15.40-ը, ինչը երևում է <<Ոստիկանության մարմին բերման ենթարկվածների հաշվառման գիրք>>-ը ուսումնասիրելիս: Հարկ է նշել, որ այս վրիպակով կալանավոր Ա.Մանուկյանի իրավունքները չեն խախտվել:

Այսուհանդերձ, Վ.Գևորգյանը խիստ նախազգուշացվել է՝ հետագայում նմանատիպ թերությունները բացառելու համար:

ՀՀ ոստիկանության շտաբ